

**ԹՈՒՐԹԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌՈՒՍԱՍԵՐԻԱԼՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ***

ՏԱԹԵՎԻԿ ՀԱԿՈՒՑԱՆ

Թուրքիայում արդեն գրեթե երկու տասնամյակ պետական մակարդակով հետևողականորեն իրականացվում է օսմանյան անցյալը վերաարժևորելուն և իսլամական աշխարհի կենտրոն՝ խալիֆայություն լինելու հանգամանքն ընդգծելուն միտված քարոզչություն: Այս համատեքստում իշխանությունները հատուկ ուշադրության են արժանացնում սուլթան Աբդուլ Համիդ II-ի կերպարին (գահակալել է 1876-1908 թթ.): Կրոնապաշտությամբ և հակաեվրոպական հայացքներով հայտնի սուլթանի գործունեության փառաբանումը լավագույնս է հակակշռում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության հիմնական մրցակցի՝ Հանրապետական ժողովրդական կուսակցության քեմալական-աշխարհիկ գաղափարախոսությանը: Աբդուլ Համիդի անձի հերոսացմանն ու քարոզչությանն են միտված պարբերաբար կազմակերպվող գիտաժողովներն ու քննարկումները, զանազան հիմնարկություններ նրա անունով կոչելը: Այս քաղաքականության գոնե մասնակի հաջողության մասին են վկայում սուլթանական կնիքները կրկնօրինակող զարդերի ու դաջվածքների ի հայտ գալը, սուլթանական հագուկապով նկարվելու մոդայիկությունը և բազմաթիվ այլ կենցաղային օրինակներ: Նախագահ Ռ. Թ. Էրդողանը ևս ուղղակի կամ անուղղակի աջակցում է այս գործընթացին՝ բոլոր հարմար առիթներով ընդգծելով Աբդուլ Համիդի կառավարման տարիների կարևորությունը Թուրքիայի համար: Օրինակ՝ 2018 թ. Միբիայի տարածքում իրականացված «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության մասին խոսելիս նախագահը, կարծես հղում անելով Աբդուլ Համիդին, որը հրաժարվել էր Պաղեստինը վաճառել հրեաներին, ասել է. «Ես չեմ վաճառի հայրենիքի թեկուզ մի թիզ հող, որովհետև այդ հայրենիքը պատկանում է ոչ թե ինձ, այլ ժողովրդին: Այդ հողը ձեռք է բերել մեր ազգը արյան գնով»¹: Մեկ այլ առիթով նա համեմատականներ է անցկացրել օսմանյան շրջանի և մեր ժամանակների միջև՝ ասելով. «Թուրքիայի Հանրապետությունը ընդամենը շարունակությունն է Օսմանյան կայսրության: Ի-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6B325 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Cumhurbaşkanlığı Erdoğan, Sultan Abdülhamid'in Sözleriyle Zeytin Dalı Harekatı'nı Değerlendirdi, (10.02.2018). <http://www.milliyet.com.tr/cumhurbaskani-erdogan-sultan-abdulhamid-istanbul-yerelhaber-2588454/>

հարկե, սահմանները փոխվել են, կառավարման համակարգը փոխվել է, բայց էությունը, ոգին նույնն են: Արևմուտքն իր գործը շարունակում է ցայսօր, միայն ժամանակներն են փոխվել և դերակատարները»²: Իսկ 2018 թ. Աբդուլ Համիդ II-ի մահվան հարյուրամյակին նվիրված գիտա-ժողովում Էրդոհանը, նկատի ունենալով քեմալականներին ու նրանց կողմնակիցներին, հայտարարել է. «Համիդը վերջին տիեզերական գահակալն էր, սակայն ոմանք ամեն կերպ փորձում են մեր երկրի պատմությունը սկսել 1923 թվականից, ջանում են մեզ հեռացնել մեր արմատներից, մեր հնավանդ արժեքներից»³:

Աշխարհիկություն-իսլամականություն, արևմտականացում-ավանդապաշտություն հակադրումը և դրա շրջանակներում սուլթան Աբդուլ Համիդի մեծարումը թուրքական հասարակության որոշ շրջանակների կողմից իրականում նոր երևույթ չեն: ԱԶԿ քարոզչամեթոդական պարզապես հմտորեն օգտագործում է իսլամամետ հասարակական-քաղաքական գործիչների ու պատմաբանների կողմից դեռևս 1950-1960-ականներին սկզբնավորված Աբդուլ Համիդի ֆետիշացումը՝ քարոզչության դասական մեթոդներին զուգահեռ կիրառելով առավել ժամանակակից գործիքներ, այդ թվում բազմասերիանոց ֆիլմերը:

Հեռուստատեսությունն ընդհանրապես և սերիալները մասնավորապես համարվում են փափուկ ուժի կիրառման կարևորագույն ռեսուրս: Ընդ որում, համացանցի տարածմանը զուգահեռ՝ սրանց դերը ոչ միայն չի նվազում, ինչպես կարելի էր ենթադրել, այլև հակառակը՝ հեշտ հասանելիության, օգտատերերի թվի շատացման և հեռարձակման աշխարհագրության ընդլայնման հաշվին ավելանում է: Թուրքական սերիալների թեմատիկ և բովանդակային բազմազանությունը, դերասանների որակյալ խաղը, ժամանակակից տեխնիկայով հագեցած նկարահանման հրապարակները և, իհարկե, պետական մեծ աջակցությունը նպաստում են դրանց լայն ժողովրդականությանը թե՛ երկրի ներսում և թե՛ երկրից դուրս: Ուստի զարմանալի չէ, որ իշխող շրջանակները օգտագործում են դրանք որպես արտաքին ու ներքին լսարանի հետ գաղափարական աշխատանքի միջոց: Այսինքն՝ կարելի է պնդել, որ թուրքական սերիալների բովանդակության ձևավորման գործում քաղաքական պատվերը կարևորագույն դերակատարում ունի:

Հարկ է նշել, որ թեև թուրքական կինոարտադրությունը շուրջ 100 տարվա պատմություն ունի, իսկ արբանյակային հեռուստատեսության միջոցով թուրքական ալիքները վաղուց հեռարձակվում են աշխարհի տարբեր երկրներում, սակայն թուրքական բազմասերիանոց «օճառա-

² TRT 1, TRT Haber ortak yayını (14.04.2017). https://www.youtube.com/watch?v=IImhl7Gh1fc&feature=youtu.be&fbclid=IwAR2GQhclpS8OVHdMh19QYZ_zarwnuxdDUmZV22oUKr0OdeFMVFD3yUDr_vw

³ Cumhurbaşkanlığı İletişim Başkanlığı (11.2.2018). <https://www.sabah.com.tr/gundem/2018/02/11/cumhurbaskani-erdogan-abdulhamid-han-dunyanin-son-evrensel-imparatorudur>

յին օպերաների» նկատմամբ հետաքրքրության աննախադեպ աճ սկսվեց 2000-ականներին՝ ոլորտում մեծ ներդրումների և որակական լուրջ փոփոխությունների շնորհիվ: Օրինակ՝ Թուրքիայի կինոարտադրողների միության նախագահ Մեթին Թունչթյուրքի խոսքերով՝ 1998-2002 թթ. հեռարձակված «Խենթ սիրտ» (Deli Yürek) սերիալի յուրաքանչյուր մասի ցուցադրության համար Ղազախստանը վճարել է 30 դոլար, իսկ 2011-2014 թթ. ցուցադրված «Փառահեղ դար»-ի (Muhteşem Yüzyıl) յուրաքանչյուր սերիայի համար՝ արդեն ավելի քան 200.000 դոլար⁴: «Սև սեր» (Kara Sevda) ֆիլմը 2017 թ. դարձավ առաջին թուրքական բազմասերիանոց ֆիլմը, որը հաղթող ճանաչվեց ամերիկյան հեռուստատեսային «Էմմի» մրցանակաբաշխության «Լավագույն հեռուստասերիալ» անվանակարգում⁵: Ներկայումս մի քանի տասնյակ լեզուներով թարգմանվող և 150-ից ավելի երկիր արտահանվող սերիալների քանակով⁶ Թուրքիան զիջում է միայն ԱՄՆ-ին⁷: Հեռուստասերիալների նման հաջողությունը նպաստում է նաև թուրքերենի, թուրքական մշակույթի նկատմամբ հետաքրքրության աճին, աշխարհում թուրքի դրական կերպարի ձևավորմանը, խթանում է զբոսաշրջությունը: Թուրքական սերիալների արտահանմամբ զբաղվող Իզգեթ Պինթոն նշում է. «Ամեն երեկո Թուրքիայով հիանում է 400 միլիոն մարդ, սրանից լավ գովազդ գոյություն չունի»⁸: Լրագրող Սեչքին Յավուզի պնդմամբ՝ սերիալների շնորհիվ աշխարհի տարբեր երկրներում նույնիսկ սկսել են երեխաներին թուրքական անուններ տալ⁹: Ուշագրավ է նաև, որ, օրինակ, 2015 թ. Էրդոհանի և նրա կնոջ Սոմալի պաշտոնական այցի ընթացքում օդանավակայանում դիմավորման արարողության ժամանակ հնչել է «Պետականության վերածնունդ. Էրթուղրուլ» հեռուստասերիալի երաժշտությունը¹⁰: Պակաս հետաքրքիր չէ նշել, որ թուրքական սերիալները բավականին բարձր ռեյտինգ ունեն հակաթուրքական դիրքորոշումներով հայտնի Բավկանյան երկրներում: Սերիալների ազդեցության ներքո այս երկրներում նույնիսկ ավելացել է թուրքերեն դասավանդող լեզվի կենտրոնների քանակը: Բոսնիա և Հերցեգովինայի

⁴ St' u Turkey targets \$2B from exports of television series (22.12.2016). <https://www.aa.com.tr/en/culture-and-art/turkey-targets-2b-from-exports-of-television-series/712248>

⁵ St' u International Emmy's winners archive, 2017. <https://www.iemmys.tv/%20international-emmy-awards/winners-archive/>

⁶ St' u Başkan Erdoğan, Külliye'de sinema sektörünün temsilcileri ile ... (29.01.2019). <https://www.youtube.com/watch?v=fZcHn1E7Vec> 3:50

⁷ St' u **Öztürk M., Atik A.**, Ulusal Pazar'dan Küresel Pazarlara Uzanan Süreçte Türk Dizilerinin Gelişimi, Maltepe Üniversitesi İletişim Fakültesi Dergisi, 3(2), 2016, էջ 68:

⁸ Türk Dizilerinin Rekoru (21.02.2014). <http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/turk-dizilerinin-rekoru>

⁹ St' u More Elif than Veronica as Chileans embrace Turkish soaps (10.03.2017). <https://www.aa.com.tr/en/americas/more-elif-than-veronica-as-chileans-embrace-turkish-soaps/768375>

¹⁰ St' u Erdoğan'ı karşılama sırasında Diriliş marşının çalınması dikkat çekti (25.01.2015). <https://www.yenisafak.com/foto-galeri/dunya/erdogan-a-somali-de-dirilis-marsi-surprizi-2003164?page=3>

OBN հեռուստաընկերության կազմակերպած «Փառահեղ դար» հեռուստասերիալի հերոսների նմանակման մրցութին 300-ից ավելի հայտ էր ներկայացվել¹¹: Պատահական չէ, որ վերջին տարիներին ընդունված է ասել, թե օսմանցիները սերիալներով են վերադարձել Բալկաններ: Սրա հետ մեկտեղ՝ Սկանդինավիայից մինչ Աֆղանստան և ԱՄՆ մի շարք երկրներ փորձում են որոշակի սահմանափակումներ դնել, իրենց որակմամբ՝ թուրքական մշակութային ներխուժման դեմ, կրճատել ցուցադրման ժամերը և այլն: Հատկանշական է, որ Ադրբեջանում պետական լեզվի վրա բացասական անդրադարձնալու հիմնավորմամբ արգելվել է թուրքերենով հեռուստասերիալների ցուցադրությունը¹²:

Թուրքական սերիալների բազմաբնույթ ներկայանկում ուրույն տեղ ունեն պատմական սերիալները, որոնցում ներկայացվում է օսմանյան տարբեր շրջանների պատմությունը՝ պետական քարոզչամեքենային ձեռնտու խմբագրությամբ: Պատմական մոտիվներով առաջին և թերևս ամենաճանաչված սերիալը սուլթան Սուլեյման I-ի մասին պատմող «Փառահեղ դար»-ն է, որը ցայսօր մնում է աշխարհում ամենաշատ դիտված թուրքական սերիալը¹³: Այս ֆիլմին հետևեցին նաև օսմանյան այլ սուլթանների կառավարման ժամանակաշրջանները ներկայացնող ֆիլմեր («Muhteşem Yüzyıl-Köse»՝ 2015-2017 թթ., «Diriliş: Ertuğrul»՝ 2014-2019 թթ., «Fatih»՝ 2013 թ. սեպտեմբեր - 2013 թ. նոյեմբեր):

Այս հոդվածում կանդադարառնանք սուլթան Աբդուլ Համիդ II-ին նվիրված սերիալին, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, նրա կերպարն ամենից շատն է շահարկվում Թուրքիայի ներկայիս գաղափարական-քարոզչական դաշտում: 2017 թ. փետրվարից հեռարձակվող «Գահակալը՝ Աբդուլ Համիդ» («Payitaht Abdulhamid», Eng. «The Last Emperor», рус. «Права на престол: Абдулхамид») սերիալը ներկայացնում է Աբդուլ Համիդի գահակալության վերջին տասնամյակը: Ֆիլմի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի մասին են վկայում Էրդոդանի այցը նկարահանման հրապարակ, սերիալը հեռարձակող TRT-ին նախագահի հղած շնորհակալական խոսքերը¹⁴ կամ նրա անկեղծ խոստովանությունը, որ ինքը որոշ սերիաներ նայում է, իսկ թոռնիկները ոչ մի սերիա բաց չեն թողնում և իր հետ քննարկում են ֆիլմի զարգացումները¹⁵: Ոչ պակաս կարևոր է նաև այն փաստը, որ այս ֆիլմի հերոսներին մարմնավորած դերասաններն էլ են քաղաքական վերնախավի ուշադրութ-

¹¹ St' u **Nuroğlu E.**, “Dizi Turizmi...” Uluslararası İstanbul İktisatçılar Zirvesi. Konferans Metni. (2013). 04. 09. 2015. <http://www.researchgate.net>

¹² St' u **Öztürk M., Atik A.**, նշվ. աշխ., էջ 79:

¹³ St' u **Ağırseven N., Öрки A.**, Evaluating Turkish TV Series as Soft Power Instruments, International Journal of Society Researches, Volume 7, Issue 13, 2017, էջ 849:

¹⁴ St' u Abdülhamid'i Anlamak Programında Recep Tayyip Erdoğan'ın Konuşması (10.02.2018). <https://www.youtube.com/watch?v=fxtD-mDwHp4>

¹⁵ St' u TRT 1, TRT Haber ortak yayını (14.04.2017). https://www.youtube.com/watch?v=IImh17Gh1fc&feature=youtu.be&fbclid=IwAR2GQhclpS8OVHdMh19QYZ_zarwnuxdDUNZV22oUKr0OdEFMVFD3yUDr_vw

յան կենտրոնում: Օրինակ՝ Աբդուլ Համիդի մահվան 100-ամյա տարելիցի կապակցությամբ Ստամբուլի նախկին քաղաքապետ, ԱԶԿ-ական Մևլութ Ույսալի նախաձեռնությամբ «Չըրաղան» պալատում կազմակերպված ճաշկերույթին աշխարհի տարբեր ծայրերում ապրող օսմանյան արքայատոմի հետնորդների օսմանօղուների, բարձրաստիճան քաղաքական գործիչների, առաջատար պատմաբանների հետ մեկտեղ հրավիրված էին հեռուստասերիալի դերասանները¹⁶: Դրանից մեկ տարի անց՝ 2019 թ. փետրվարի 10-ին, Աբդուլ Համիդի մահվան արդեն 101-ամյակի կապակցությամբ Անթալիայի քաղաքապետարանի կազմակերպած «Հիշել և հասկանալ Աբդուլ Համիդին» խորագրով գիտաժողովին հետազոտողների փոխարեն զեկուցումներով հանդես եկան սերիալի դերասանները¹⁷:

Այս և նմանատիպ օրինակները թույլ են տալիս եզրակացնել, որ ֆիլմը բացարձակ քաղաքական պատվեր է և առաջին հերթին քարոզչական նպատակներ է հետապնդում: Եվ իսկապես, հեռուստասերիալում ներկայացվում է հզոր, հարուստ Օսմանյան կայսրություն, որը գրեթե միշտ հաղթում է պատերազմներում և հաջողում դիվանագիտության ոլորտում, ինչը XIX դարի վերջի-XX դարի սկզբի իրավիճակին բնավ չի համապատասխանում: Թուրք հայտնի գրող-պատմաբան Նեջիփ Ֆազլի Քըսաքյուրեքի 1965 թ. տպագրված «Հզոր տիրակալ» գրքի¹⁸ ազդեցությամբ նկարահանված ֆիլմում Աբդուլ Համիդ II-ի կերպարը բնականաբար իդեալականացված է: Նա ներկայացվում է որպես մեծ գիտելիքների և սուր մտքի տեր, հայրենասեր, ազնիվ, արդար, բարեգույթ մարդ: Ինչպես նշում է Ստամբուլում հրատարակվող երկլեզու (հայերեն-թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթի սյունակագիր Է. Ջ. Դադլըօղլուն, «Համիդը ոչ թե սուլթան է, այլ 1890-ական թթ. ապրող մի Փոլաթ Ալեմդար»¹⁹: Նա ոստիկանության հանճար է, որը բացահայտում է դեպքեր, որոնցից տեղյակ չէ և կարդում է թերթեր այն լեզուներով, որ

¹⁶ Sté u İBB Başkani Mevlüt Uysal Sultan II. Abdülhamid Han'ın torunlarını buluşturdu (08.02.2018). <https://www.sabah.com.tr/yasam/2018/02/08/ibb-baskani-mevlut-uysal-sultan-ii-abdulhamid-hanin-torunlarini-bulusturdu>

¹⁷ Sté u AKP'li belediye Abdülhamid'i aniyor: Tarihçiler değil dizi oyuncuları katılıyor! (09.02.2019). <http://haber.sol.org.tr/toplum/akpli-belediye-abdulhamidi-aniyor-tarihçiler-degil-dizi-oyunculari-katiliyor-256282>

¹⁸ Sté u **Kısakürek N. F.**, Ulu Hakan II. Abdülhamid Han, İstanbul 1965: Արժե նշել, որ անձամբ Ռ. Թ. Էրդողանը խիստ կարևորում է Քըսաքյուրեքի դերը Թուրքիայի կյանքում: Դեռևս 2014 թ. «Նեջիփ Ֆազլի Քըսաքյուրեք» մրցանակաբաշխության արարողության ժամանակ, որը նախաձեռնել էր իշխանամետ «Սթար» թերթը, նախագահ Էրդողանը բացահայտ գովեստի խոսքեր է ուղղել պատմաբանին. «Մեծ է Քըսաքյուրեքի ավանդը... նրան հաջողվել է հասարակության շրջանում փոխել միակուսակցական շրջանի մտածելակերպը»: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Cumhurbaşkanı Recep Tayyip Erdoğan Necip Fazıl ile olan anısını anlattı (03.11.2014). <http://www.hurriyet.com.tr/gundem/cumhurbaskani-recep-tayyip-erdogan-necip-fazil-ile-olan-anisini-anlatti-27506507>

¹⁹ Փոլաթ Ալեմդարը «Գայլերի հովիտը» (Kurtlar Vadisi) թուրքական հեռուստասերիալի գլխավոր դերակատարն է:

չգիտի»²⁰: Լրագրող-հետազոտողի այս պնդումը միանգամայն արդարացված է, քանի որ նույնիսկ ամենահամիդամետ պատմաբաններն են ընդունում, որ նա բնավ չի փայլել իր լեզվական գիտելիքներով:

Աբդուլ Համիդի դրական կերպարն ավելի արտահայտիչ է դառնում նրան շրջապատող դավաճան գործիչների ֆոնին՝ Դամաթ Սահմուդ փաշան և նրա որդի արքայազն Սաբահաթթինը, Ալեքսանդր Պարվուսը²¹, որի կերպարը մարմնավորող դերասանը ազգությամբ հայ է՝ Գևորգ Մելիքյան, Թեոդոր Հերցլը և ուրիշներ: Ֆիլմի ամբողջ ընթացքում կայսրության թշնամիները փորձում են կործանել երկիրը, իսկ սուլթանն ամեն ինչ անում է այն կայուն պահելու համար:

Հեռուստասերիալն ունի քարոզչական մի քանի նպատակ, որոնցից առաջնային է թերևս գործող նախագահ Էրդողանի և Աբդուլ Համիդի կերպարի միջև զուգահեռներ անցկացնելը: Ինչպես նշում է Է. Ջ. Դադլըօղլուն, Աբդուլ Համիդը ֆիլմում կարծես սուլթան չէ, մեր օրերից անցյալ գնացած քաղաքական գործիչ է, որը իշխանությունը ստանում է ոչ թե ընտանիքից կամ գահից, այլ ժողովրդական սիրուց, որի արմատներն անհասկանալի են, ու տպավորություն է ստեղծվում, որ սուլթանը վերածնվում է Էրդողանի կերպարում²²: Աբդուլ Համիդ-Էրդողան նմանության ոչ տեսանելի դետալներից են, օրինակ, ֆիլմի առաջին մասում սուլթանի նկատմամբ մահափորձը և նրա փրկվելը մի հասարակ քաղաքացու օգնությամբ: Այս դրվագը մասնագետները նմանեցնում են 2016 թ. հուլիսի 15-ին Էրդողանի վարչակարգի դեմ չհաջողված ռազմական հեղաշրջմանն ու այդ ընթացքում նախագահի կոչով հասարակ քաղաքացիների փողոց դուրս գալուն: Էրդողան-Աբդուլ Համիդ զուգահեռի շրջանակներում է նաև ֆիլմում ներկայացվում Եվրոպյան Ասիային կապող «Մարմարա» ստորջրյա թունելի կառուցման նախաձեռնումը սուլթանի կողմից²³: Նա ասում է. «Եթե ունենք երազանք, ապա այն մի օր իրականություն կդառնա, քանի որ մենք ապրում և աշխատում ենք հանուն մեր պետության»²⁴: Տողատակում պարզ է, որ Աբդուլ Համիդի այդ երազանքն իրականացվել է Էրդողանի ջանքերով, քանի որ Ստամբուլի մետրոյի Մարմարա գիծը շահագործման է հանձնվել հենց նրա իշխանության օրոք (2013 թ.): Երկու առաջնորդներ-

²⁰ **Dağlıoğlu E. C.**, Osmanlı tahtında bir Polat Alemdar (09.03.2017) / <http://www.agos.com.tr/tr/yazi/17910/osmanli-tahtinda-bir-polat-alemdar>

²¹ Ալեքսանդր Պարվուսը ծնվել է էթնիկ հրեաների ընտանիքում 1867 թ.: Պարվուսը Ստամբուլում ապրել է հինգ տարի, որտեղ հիմնել է գենքի առևտրով զբաղվող ընկերություն: Երիտթուրքերի ֆինանսական և քաղաքական խորհրդատուն էր, համագործակցում էր Էնվեր, Թալեաթ և Քեմալ եռյակի և ֆինանսների նախարար Ջավիդ Բեյի հետ:

²² Տե՛ս **Dağlıoğlu E. C.**, Necip Fazıl'dan Payitaht'a: Hangi Abdülhamid?, Toplumsal Tarih, Haziran 2019, էջ 49:

²³ Տե՛ս **Afyoncu E.**, Abdülhamid'in hayali ikinci kez gerçekleşti (25. 12. 2016) / <https://www.sabah.com.tr/yazarlar/erhan-afyoncu/2016/12/25/abdulhamidin-hayali-ikinci-kez-gerceklesti>

²⁴ "Size bir müjdem var Paşalar! Tünel-i Bahri!". <https://www.youtube.com/watch?v=jF9TluUx9uM>

րի միջև որոշակի ընդհանրությունն ընդգծում են թե՛ համիդամետ և թե՛ հակահամիդյան շրջանակները՝ նշելով, որ Էրդողանը Արդուլ Համիդի ժառանգն է²⁵: Ընդ որում, եթե իշխանամետ «A Haber» ալիքն այս նմանությունն ավելի ընդգծելու համար Արդուլ Համիդի մասին պատմող վավերագրական ֆիլմի սցենարում էլ է կարևորել նրա և Էրդողանի ընդհանրությունները²⁶, ապա ընդդիմադիրները իրենց դիրքորոշումը փորձում են արտահայտել սոցիալական մեդիայում XIX դարում Արդուլ Համիդի հակառակորդների կարգախոսներ ներառելով, օրինակ, «Կորչի բռնապետությունը, կեցցե՛ ազատությունը»²⁷:

Սերիալի բացահայտ քարոզչական ուղղվածության դրսևորումներինց է նաև Արդուլ Համիդի կերպարի արտասանած հետևյալ միտքը. «Մենք վարդենին ջրում ենք, իսկ այդ ջուրը և՛ վարդի համար է օգտակար, և՛ փշի... եթե մեր ջրած փշերը մի օր թեքվեն դեպի մեզ, մենք անպայման կկտրենք դրանք»²⁸: Թուրքերեն վարդ – güll բառի միջոցով արված բառախաղը կարծես բացահայտ սպառնալիքի ուղերձ լինի Թուրքիայի նախկին նախագահ Արդուլլահ Գյուլի, ինչպես նաև նախկին վարչապետ Ահմեթ Դավութօղլուի հասցեին: Ուշագրավ է, որ անձամբ Ա. Դավութօղլուն անդրադարձել է այս հարցին և նշել, որ երբեք լուրջ չի ընդունել ֆիլմում տեղ գտած և երկրի ժամանակակից քաղաքական օրակարգին հղումներ պարունակող մի շարք արտահայտություններ, որոնք սուլթանը անհնար է երբևէ օգտագործեր նախկին պատգամավորների, նախկին պաշտոնյաների հասցեին: Ընդգծելով, որ իր կարծիքով նման ուղերձները հարիր չեն ո՛չ պետական, ո՛չ էլ հասարակական էթիկայի տեսանկյունից, նախկին վարչապետը հավելել է, որ եթե կա մեկը, որը կարող է Արդուլ Համիդի ժառանգությանը տեր կանգնել, դա միանշանակ իրենք են²⁹: Գյուլի և Դավութօղլուի հետ կապված այս դեպքը մեկնաբանելով՝ «T 24» թերթի սյունակագիր Յալչըն Դոդանը ֆիլմից հնչող ակնհայտ քարոզչությունը համեմատում է հայտնի՝ «Աղջի կս, քեզ եմ ասում, հա ըս ջան, դու՛ լսիր» ասացվածքի հետ³⁰:

Քարոզչական մեկ այլ կարևոր կետ է Արդուլ Համիդի կառավարման ընթացքում Պաղեստինի տարածքում հրեական պետության ստեղծման փորձերին անդրադարձը: Դավաճան թուրքերի հետ համագործակցող հրեաները կայսրության անկմանը նպաստող հիմնական

²⁵ Տե՛ս **Yanarocak H. C.**, Decoding the "Payitaht Abdülhamid", *Turkeyscope - Insights on Turkish Affairs*, Vol. 1, № 5, March, 2017, էջ 4:

²⁶ Տե՛ս A Haber | İmparatorluğa Darbe '31 Mart' Belgeseli. <https://www.youtube.com/watch?v=TSEItYELhIs&t=6238s&index=3&list=PLaM7CSk8-cAS0vaHGQF4KBPqzEv8oJlXs>

²⁷ <https://twitter.com/FeryalKarakulak/status/837261980998201346>

²⁸ Payitaht Abdülhamid 85. Bölüm 2. Tanıtım! <https://www.youtube.com/watch?v=Drgkw98u4jU>

²⁹ Տե՛ս Davutoğlu'ndan Payitaht Dizisindeki Göndermelere Cevap: Gün Gelir Kimin İhanet Ettiği Görülür (10.05.2019). <https://www.haberler.com/davutoglu-ndan-payitaht-dizisindeki-gondermelere-12036046-haberi/>

³⁰ Տե՛ս **Doğan Y.**, "Payitaht Abdülhamit'e" kadar uzanan duello (10.05.2019). <https://t24.com.tr/yazarlar/yalcin-dogan/payitaht-abdulhamit-e-kadar-uzanan-duello,22485>

գործող անձինք են: Ավելին, քաղաքական սիոնիզմի գաղափարական հայրը՝ Թեոդոր Հերցլը, ֆիլմում բնութագրվում է որպես մոլագար, որը ձգտում է ստեղծել հրեական պետություն «Նեդոսից մինչև Եփրատ»: Հատկանշական է, որ, փորձելով խուսափել հակասեմիտիզմի մեղադրանքներից, հեռուստասերիալի արտադրողները սիոնիզմի գաղափարախոսության խմբագրված տարբերակներ են ներկայացրել: Այսպես Հերցլի հայրը՝ Ջակոբ Հերցլը, իբր քարոզում է, թե հրեականությունը չի պատվիրում Իսրայել պետության ստեղծում, ինչի համար էլ որդին նրան շղթայում է: Այլ հերոսների միջոցով հեղինակները տարբերակում են հրեա և սիոնիստ հրեա հասկացությունները, որոնցից առաջինը բնականաբար դրական է, իսկ երկրորդը՝ բացասական: Այս երևույթը շատ նման է տարիներ շարունակ հասարակական դիսկուսում կիրառվող վատ և լավ հայերի մասին պնդումներին, երբ թուրքերը փորձում էին տարանջատել Հայ դատի համար պայքարող սփյուռքահայերին հայության այլ խմբերից:

Պետք է նշենք, որ հեռուստասերիալում էլ քիչ չեն հայերին վերաբերող անդրադարձները: Ֆիլմի սկզբից էլ ներկայացվում է Թուրքիայում այսպես կոչված հայ կոմիտեականների «հակապետական, ահաբեկչական» գործունեությունը՝ շուկայում մանր հարձակում կազմակերպելուց մինչև հրեաներին աջակցելը բոլոր մակարդակներում: Այսպես, ֆիլմի դրվագներից մեկում հնչակյանները Ստամբուլի կենտրոնում իբր փորձում են կողոպտել հոգևորականի զգեստով շրջող հերոսներից մեկին՝ մարդասպան Հիրամին, սակայն նրան փրկում են թուրքերը³¹: Մեկ այլ դրվագում Հայ հեղափոխական դաշնակցության առաջնորդներից Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) և Թեոդոր Հերցլի երկխոսությունից պարզ է դառնում, որ հայերը և հրեաները համագործակցում են, կամ ավելի ճիշտ՝ հայերը գործիք են սիոնիստների և նրանց մեջքին կանգնած Մեծ Բրիտանիայի ձեռքերում: Սա ևս թուրքական ավանդական քարոզչության դրսևորումներից է, երբ անկախության համար հայերի պայքարը ներկայացվում է որպես արտաքին ուժերի՝ Օսմանյան կայսրությունը մասնատելուն ուղղված քաղաքական խաղի մի մաս:

Հատկանշական է, որ հայերի բոլոր այս «դավաճանություններին» հակառակ՝ սուլթանը հայրաբար է նրանց մոտենում: Ֆիլմի վեցերորդ սերիայում, օրինակ, Արդուլ Համիդը սեփական ձեռքերով ոտքի պրոթեզ է պատրաստում ազգությամբ հայ հաշմանդամ երեխայի՝ Օնիկի համար: Նրան պրոթեզը հանձնելուց հետո նա ասում է. «Պետք է ամեն ինչ անել մարդկանց ապրեցնելու համար, որ պետությունն ապրի»³²: Բնական է, որ թե՛ երեխայի ազգությունը, թե՛ սուլթանի արտահայ-

³¹ Տե՛ս Payitaht Abdülhamid 1. Bölüm. <https://www.youtube.com/watch?v=MyNz3YvSEhk> 1:00:45

³² Payitaht Abdülhamid 6. Bölüm. <https://www.youtube.com/watch?v=-h7iBAGOOko> 1:30:45

տությունները հատուկ են ընտրված՝ ակնառու դարձնելու մեկ այլ թուրքական թեզ, որ թուրքերն ու հայերը բարիդրացիական հարաբերություններ են ունեցել և մինչ եվրոպական երկրների խառնակիչ գործունեության ծավալումն ապրել են խաղաղ ու համերաշխ: Ոչ պակաս հետաքրքիր է այն փաստը, որ գորավար Անդրանիկ Օզանյանը (մահացել է 1927 թ. Կալիֆորնիայում սրտի կաթվածից) ֆիլմում ներկայացվում է որպես հայ ավազակ, որը գոհվում է Ստամբուլում ռազմական բախումների ժամանակ: Հեռուստատեսիալի հայկական գծի առնչությամբ խիստ քննադատությամբ է հանդես եկել Թուրքիայի ազգային ժողովի՝ ազգությամբ հայ պատգամավոր, ընդդիմադիր Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության անդամ Կարո Փայլանը՝ նշելով, որ թուրքական պետական հեռուստաընկերությունը բացահայտ կողմնակալություն է դրսևորում: Հայ պատգամավորը «խիստ տրամաբանական» է համարել, որ ֆիլմի հեղինակները լռում են Աբդուլ Համիդի օրոք օսմանյան վարչական ապարատում բարձրաստիճան պաշտոնյա բազմաթիվ հայերի մասին և ֆիլմում ներկայացնում միայն մեկ՝ այն էլ դավաճան հայի, որի անունն է Գարո³³: Հետաքրքիր է նաև, որ ԹԱՄԺ պլանավորման և բյուջեի հանձնաժողովի նիստում TRT-ի գլխավոր տնօրենի հետ բանավիճելիս Գ. Փայլանը հայտարարել է, թե Աբդուլ Համիդի հարազատ մայրը հայ է եղել, անունը՝ Վերժին, սակայն զարմանալիորեն այս տեղեկատվությունը որևէ արձագանքի չի արժանացել:

Ֆիլմի հայկական բաղկացուցչի մասին խոսելիս է. Ջ. Դադլըզլուն ընդգծում է տեղ գտած ժամանակագրական խեղաթյուրումները: Նա նշում է, որ 1896 թ. օգոստոսի 14-ին Կ. Պոլսում դաշնակցականների կողմից Օսմանյան բանկի գրավումը³⁴, որը տեղի է ունեցել նախքան սուլթանի գահակալության 20-ամյակը, ներկայացված է միայն 12-րդ սերիայում³⁵: Ավելին, նրա կարծիքով, ամենայն հավանականությամբ, 1894-1896 թթ. կոտորածներին անդրադառնալուց խուսափելու համար են ֆիլմի ստեղծողները պատումը սկսում 1896 թ. օգոստոսի 30-ից³⁶:

Ի դեպ, «Գահակալը՝ Աբդուլ Համիդ» սերիալը խիստ քննադատության է արժանացել նաև բազմաթիվ իշխանամետ ազգայնական գործիչների կողմից: Նրանց քննադատությունները առավելապես վերաբերում են

³³ Տե՛ս **Karabağlı H.**, HDP'li Paylan: 2. Abdülhamid dizisinde bir Ermeni var, hain, sinsî; adı ne: Garo, özel olarak seçmişler (23.05.2019). https://t24.com.tr/haber/hdp-li-paylan-2-abdulhamid-dizisinde-bir-ermeni-var-hain-sinsi-adi-ne-garo-ozel-olarak-secmisler,822713?fbclid=IwAR3TfjD4sEelTx8AOEV1IU87DSn7Vf5fcpnkeb9_j3P5IxMp6O9Xv5YPwQ4

³⁴ Զինված գործողությունը ղեկավարում էին երիտասարդ դաշնակցականներ՝ 23-ամյա Բաբկեն Սյունին (Պետրոս Փարյան), 24-ամյա Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) և 25-ամյա Հրաչ (Հայկ) Թիրաթյանը: Բանկ օտոմանի հարձակման հիմնական նպատակը եվրոպական երկրների ուշադրությունը Հայկական հարցի և հայկական բարեփոխումների վրա հրավիրելն էր, սակայն միջադեպը հայկական նոր կոտորածների ու հալածանքների առիթ դարձավ:

³⁵ Տե՛ս **Dağlıoğlu E. C.**, նշվ. աշխ., էջ 50:

³⁶ Տե՛ս **Dağlıoğlu E. C.**, Osmanlı tahtında bir Polat Alemdar (09.03.2017). <http://www.agos.com.tr/tr/yazi/17910/osmanli-tahtinda-bir-polat-alemdar>

ֆիլմի դետալներին, ձևավորմանը կամ փաստական-ժամանակագրական անճշտություններին, այլ ոչ գաղափարական քարոզչությանը:

Լրագրող, պատմաբան Մուրադ Բարդաքչըն հեռուստասերիալը կարճ բնութագրել է՝ «ամոթալի և ծիծաղելի»: Նա ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ սերիալում տեղ գտած օսմաներեն գրություններում չափազանց շատ են տառասխալները³⁷, օսմաներեն շատ բառերի արտասանական սխալները³⁸: Ըստ Բարդաքչընի՝ օսմանյան շրջանում ընդունված էր, որ գավակները սուլթանին դիմեն «տիրակալ», մինչդեռ ֆիլմում օգտագործված են հայրիկ կամ սիրելի հայրիկ ձևերը: Պատմաբանը նշում է նաև, որ Աբդուլ Համիդը մշտապես ճաշել է միայնակ կամ հազվադեպ՝ Մյուշֆիքա սուլթանուհու հետ, մինչդեռ ֆիլմում ներկայացվում է, որ սուլթանը մշտապես ճաշում է երեխաների և կանանց հետ³⁹:

Էրդողանի վստահությունը և աջակցությունը վայելող հայտնի պատմաբան Քադիր Մըսըրոլլուն ֆիլմը բնութագրել է որպես անգրագիտություն: Պատմաբանը նշել է, որ մեկ ժամվա ընթացքում ֆիլմում հարդարանքի, հանդերձանքի, խոսելաճի, բառապաշարի գործածության 10-ից ավել սխալ է նկատել: Ըստ Մըսըրոլլուի՝ հսկայական կայսրություն դեկավարող սուլթանը չէր կարող օրվա մեծ մասն անցկացնել արհեստանոցում ատաղձագործի գոգնոցով, ինչպես ներկայացված է ֆիլմում⁴⁰:

Մեկ այլ հայտնի թուրք պատմաբան Իլբեր Օրթայլըն, ի պատասխան լրագրողի՝ ֆիլմի վերաբերյալ ինչ կարծիք ունենալու հարցի, ասել է, որ չի ցանկանում խոսել այդ մասին, քանի որ նման Աբդուլ Համիդ գոյություն չունի⁴¹: Օրթայլըն շեշտել է, որ Աբդուլ Համիդը, ի տարբերություն սերիալի կերպարի, շատ քչախոս էր, խոհեմ, հեռատես, շրջահայաց: Պատմաբանին հատկապես զայրացրել է այն, որ 1-ին սերիալում Աբդուլ Համիդն ապտակում է հյուպատոսին⁴², քանի որ Օրթայլընի կարծիքով՝ սուլթանը նման բանի ընդունակ չէր⁴³: Այս նույն տեսարանի

³⁷ Տե՛ս **Bardakci M.**, Ayıptan da öte bir iş: 'Payitaht Abdülhamid'de eski harflerle olan herşey yanlış yazılıyor! (27.03.2017). <https://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/1440351-ayiptan-da-ote-bir-is-payitaht-abdulhamidde-eski-harflerle-olan-hersey-yanlis-yaziliyor>

³⁸ Օսմանյան կայսրության պաշտոնական անվանումը «Devlet-i Aliyye» է, որտեղ, ըստ օսմանյան ուղղախոսության կանոնների, տառասկզբի A-ն պետք է արտասանվի կարճ, սակայն ֆիլմում մշտապես հակառակ երևույթին ենք ականատես լինում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Bardakci M.**, Ayıptan da öte bir iş: 'Payitaht Abdülhamid'de eski harflerle olan herşey yanlış yazılıyor! (27.03.2017). <https://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/1440351-ayiptan-da-ote-bir-is-payitaht-abdulhamidde-eski-harflerle-olan-hersey-yanlis-yaziliyor>

³⁹ Տե՛ս **Bardakci M.**, Payitaht İstanbul (01.03.2017). <https://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/1408740-payitaht-istanbul>

⁴⁰ Տե՛ս "Payitaht Abdülhamid" Dizisi Hakkında. https://www.youtube.com/watch?v=cfpNs-nS9P-o&feature=share&fbclid=IwAR1kdt7GX6yCxF6-F_Sf7tQ33-pFNCsiValLcGrbbsxtEL--CnprWwVutKY

⁴¹ Տե՛ս Ulu Hakan mı Kızıl Sultan mı? İlber Ortaylı ile Gündem Özel 21.12.2018. <https://www.youtube.com/watch?v=1jsZjDuJlFo> 21:45

⁴² Տե՛ս Payitaht Abdülhamid 1. Bölüm. <https://www.youtube.com/watch?v=MyNz3YvSEhk> 1:43:45

⁴³ Տե՛ս **Ortaylı İ.**, Böyle bir Abdülhamid yok (23.12.2018). <https://www.milligazete.com.tr/haber/1769090/prof-dr-ilber-ortayli-boyle-bir-abdulhamid-yok>

մասին Օսմանյան արքայատոհմի ներկայացուցիչներից Նիհան Օսմանօղլուն ասել է, որ այն իրեն ավելի շատ Էրդոդանին է հիշեցնում⁴⁴:

Իսլամագետ, պատմաբան Մուստաֆա Քաչարը մատնանշում է մի շարք փաստական սխալներ: Նա գրում է, որ Դամասկոսից Մեքքա ձգվող Հիջազ երկաթգծի կառուցման մտադրության մասին Արդուլ Համիդը հայտարարել է 1900 թ. ապրիլին⁴⁵: Երկաթգծի կառուցումն սկսվել է 1900 թ. սեպտեմբերի 1-ին՝ Արդուլ Համիդի կառավարման 25-ամյակի օրը⁴⁶, սակայն ֆիլմի դեպքերը ծավալվում են 1896 թ.-ից, երբ սկսվում է երկաթգծի կառուցումը: Բացի այդ՝ ֆիլմում զուգահեռ են ընթանում 1902 թ. Փարիզում տեղի ունեցած երիտթուրքական կոնգրեսը և 1908 թ. անգլո-ռուսական բանակցությունները⁴⁷:

Պատմաբան Բուրաք Օնարանը ֆիլմը ոչ թե պատմական հեռուտասերիալ, այլ պարզապես քարոզչություն է համարում⁴⁸: Մյունակագիր Սալիհ Ջենափ Բայդարը նշել է, որ ֆիլմը թույլ է նույնիսկ քարոզչության տեսանկյունից, քանի որ նման է տարրական դասարանների շոուի: Նա ասել է, որ խոսակցության մեջ մի քանի հին օսմաներ են բառ օգտագործելը դեռ չի նշանակում ճիշտ ներկայացնել պատմությունը⁴⁹:

Թուրքիայի գրողների միության անդամներից Մեհմեդ Դոդանը ևս քննադատել է հեռուտասերիալը՝ նշելով, որ պետք է դադարեցնել այդ ֆիլմի ցուցադրությունը, քանի որ այն Արդուլ Համիդի հետ ոչ մի ընդհանուր կապ չունի. «Համիդը օսմանյան սուլթան է, դիվանագիտությունը նրա ամենակարևոր գործառույթներից է, սակայն դուրք ներկայացնում եք անվերջ հոխորտացող սուլթանի, որը կարծես թաղային հեղինակություն լինի... Սուլթանն իսկապես հիանալի պետական գործիչ է, լեգենդ, սակայն եթե շարունակվի այս ֆիլմի ցուցադրությունը, կավարտվի այդ լեգենդը»⁵⁰: Իսկ թուրք սցենարիստ, ռեժիսոր և պրոդյուսեր Սեմիհ Քափլանօղլուն նշել է. «Չկա այդպիսի պատմություն, այդպիսի Արդուլ Համիդ, հանուն վարկանիշի դուրք չեք կարող Արդուլ Համիդին հեռուտատեսային աստղ դարձնել»⁵¹:

Հնչող քննադատություններին ի պատասխան՝ ֆիլմի ստեղծագործական թիմը փորձում է տալ որոշակի բացատրություններ: Այս-

⁴⁴ Տե՛ս **Osmanoğlu N.**, Abdülhamid Han Davos'ta 'one minute' demezdi (09.03.2017). <http://www.hurriyet.com.tr/gundem/nihan-osmanoglu-abdulhamid-han-davosta-one-minute-demezdi-40389478>

⁴⁵ Տե՛ս **Kaçar M.**, Abdülhamidin Mega Projesi: Hicaz Demiryolu, Derin Tarih, İstanbul, Özel sayı 3, 2015, էջ 87:

⁴⁶ Տե՛ս **Koloğlu O.**, Abdülhamid Gerçeği, İstanbul, Gür Yayınları, 1987, էջ 220:

⁴⁷ Տե՛ս **Dağlıoğlu E. C.**, նշվ. աշխ., էջ 50:

⁴⁸ Տե՛ս **Onaran B.**, Payitaht Abdülhamid vesilesiyle: Tarih-kurgu-propaganda, Birikim, № 336, Nisan 2017, էջ 77:

⁴⁹ Տե՛ս **Baydar S. C.**, Payitaht Abdülhamid. <http://www.fikircogrfyasi.com/makale/payitaht-abdulhamid>

⁵⁰ 'Payitaht Abdülhamid' dizisi durdurulmalı! (05.03.2017). https://www.yeniasya.com.tr/kultur-sanat/payitaht-abdulhamid-dizisi-durdurulmalı_425547

⁵¹ **Atay T.**, Yok böyle Abdülhamid, var böyle Erdoğan! (06.03.2017). http://www.cumhuriyet.com.tr/koseyazisi/691620/Yok_boyle_Abdulhamid_var_boyle_Erdogan_.html

պես, ֆիլմի պատմական հարցերով խորհրդատու Սելման Քայաբաշըն, որը, փաստորեն, կրում է ֆիլմի միջավայրը հնարավորինս պատմական դարձնելու պատասխանատվությունը, նշել է, որ հեռուստասերիալը առավելագույնս իրական դարձնելու համար ամեն ինչ արվում է, սակայն եթե իրական հերոսի և սերիալի կերպարի միջև տարբերություններ չլինեն, ֆիլմը վավերագրական կդառնա: Քննադատների պնդումներին հակադարձելով՝ Քայաբաշըն խորհուրդ է տվել նրանց կարդալ սուլթանի դուստրերի՝ Այշե և Շադիե Օսմանօղլուների հուշերը⁵² և հավելել, որ հեռուստասերիալի ցուցադրման շնորհիվ ավելացել է Աբդուլ Համիդի և նրա ընտանիքի մասին համացանցային հարցումների թիվը, իսկ գրախանութներում աճել է սուլթանի մասին գրքերի նկատմամբ հետաքրքրությունը⁵³: Ֆիլմի ռեժիսոր Էմրե Քոնուքն իր հերթին ընդգծել է, որ ֆիլմի միջոցով պատմություն չեն սովորում, սակայն եթե նմանատիպ սերիալներն ավելացնում են գիրք կարդալու սովորությունն ու պատմության նկատմամբ հետաքրքրությունը, ուրեմն թիվը նպատակին հասել է, ապա հավելել, որ հպարտ է, քանի որ ֆիլմը մեծ արձագանք է գտել ոչ միայն Թուրքիայում, այլև արտասահմանում, ինչի վկայությունն են այլ երկրներում դերասաններին ցուցաբերած հոգածությունն ու բազմաթիվ երկրներից ստացվող նամակները⁵⁴:

Պետք է շեշտենք, որ «Գահակալը՝ Աբդուլ Համիդ» հեռուստասերիալի ռեյտինգը թեև ամպագոռոգո չէ, սակայն բավական բարձր է:

Այսպիսով, Էրդողանի գլխավորած իշխանական թևը փորձում է պատմական սերիալների միջոցով Թուրքիայում և դրա սահմաններից դուրս ձևավորել Օսմանյան կայսրության և թուրքերի նոր իմիջ: Մինևույն ժամանակ, սերիալների միջոցով նրանք հաճախ յուրահատուկ մեսիջներ են հղում հեռուստադիտողին՝ փորձելով մի շարք հարցերի վերաբերյալ նրանց մեջ ստեղծել իշխանամետ դիրքորոշում: Պատմական հեռուստասերիալներն ամրապնդում են հասարակության ազգայնական դիրքորոշումը, հիշեցնում կայսերական անցյալի մասին: Աբդուլ Համիդը՝ որպես օսմանյան վերջին հզոր սուլթան, այս շարքում առանձին տեղ ու դեր ունի, քանի որ հենց նրա կերպարն է առավել մոտ Ռ. Թ. Էրդողանին, և նրա մոտեցումներն են առավել համապատասխանում ներկայիս նախագահի պատկերացումներին:

Բանալի բառեր – *Օսմանյան կայսրություն, Աբդուլ Համիդ II, Ռ. Թ. Էրդողան, թուրքական կինո, պատմական հեռուստասերիալներ, «Գահակալը՝ Աբդուլ Համիդ», քարոզչություն, հայեր*

⁵² Տե՛ս **Osmanoğlu A.**, Babam Sultan Abdülhamid, İstanbul, Timaş Yayınları, 2013, **Osmanoğlu Ş.**, Babam Abdülhamid: Saray ve Sürgün Yılları, İstanbul, Timaş yayınları, 2016:

⁵³ Տե՛ս Payitaht Abdülhamid'in tarih danışmanından eleştirilere yanıt (05.04.2017). <https://www.aa.com.tr/tr/kultur-sanat/payitaht-abdulhamidin-tarih-danismanindan-elestirilere-yanit/789503#>

⁵⁴ Տե՛ս Payitaht Abdülhamid'e yurt dışında da yoğun ilgi (21.01.2019). <https://www.aa.com.tr/tr/kultur-sanat/payitaht-abdulhamide-yurt-disinda-da-yogun-ilgi/1370399>

ТАТЕВИК АКОПЯН – Турецкие исторические сериалы как средство официальной пропаганды. – С начала 2000-х годов турецкие власти проводят последовательную политику переоценки и популяризации османского прошлого. Важным средством пропаганды как внутри страны, так и за её пределами становится телевидение, в частности телесериалы. Турецкие сериалы – одно из наиболее действенных орудий “мягкой силы”. Они переводятся на различные языки и транслируются в более чем 150 странах. Отдельное место среди турецких теленовелл занимают сериалы, освещающие те или иные периоды османской истории в наиболее выгодном для турецких властей свете. В статье представлены основные направления турецкой пропаганды на примере сериала, посвящённого последнему десятилетию правления султана Абдулхамид II.

Ключевые слова: Османская империя, Абдулхамид II, Р. Т. Эрдоган, турецкое кино, исторические сериалы, «Права на престол: Абдулхамид», пропаганда, армяне

TATEVIK HAKOBYAN – The Turkish Historical Series as a Tool of Official Propaganda. – The politics, targeting re-appreciation and popularization of the Ottoman past is carried out by the Turkish authorities from the early 2000s. Television in general and, especially, TV series are important means of propaganda both for an internal and external audience. The Turkish TV series, as one of the most effective tools of the “soft power”, is being translated into dozens of languages and broadcast in more than 150 countries. The historical series, representing different periods of Ottoman history in the way most convenient for Turkish authorities, have a special place among them. This paper focuses on the main targets of Turkish propaganda, using the case of the “Payitaht: Abdulhamit” series, devoted to the last decade of the ruling of the sultan Abdulhamit II.

Key words – Ottoman Empire, Abdul Hamid II, R.T. Erdogan, Turkish cinema, historical series, “The Last Emperor”, propaganda, Armenians

Ներկայացվել է՝ 12.05.2019

Գրախոսվել է՝ 23.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019